Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Zmuhn

891.99
9-26

I Պրակ.

ՊԵՐՃ ԳՈՒՑՓԻՃԵՐՆ.

ՀՈՎԻԿ

(ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

«Կեանքը մի դալրոց է երկրի երեսին,
«Ուր պէտք է կրթենք մեր անմահ հոգին։

ԱԽԱԼՑԽԱ
ՏՊԵՐԱՆ ԵՂԲ. ՄԱՐՏԻՐՈՍԵՑՆԵՐԻ
1906

891.99
Գ-26
82C

01 JAN 2009
08 DEC 2011
91.99
36134

ՊԵՐԱ ԴԱՅՓԻՃԵԱՆ.

ՀՈՎԻԿ

(ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

«Կեանքը մի դպրոց է երկրի երեսին,
«Ուր պէտք է կրթենք մեր անմահ հոգին։

ԱԽԱԼՑԽԱ
ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՆԵՐԻ
1906

2166

Առ ի սրտէ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ՊԵՐՃԸ

ԻՒՐ ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ՝

ՎԱՀՐԱՄԻՆ ԵՒ ՍՈՒՐԷՆԻՆ.

—ԻՄ ԱՂՕԹՔԸ.—

Ո՞վ աննիւթական էութիւն Աստուածային,
Դու որ, այն անգործ աներևոյթ հիւլէներին
Կապեցիր ներդաշնակ կերպով բոլորին,
Ստեղծեցիր յարաշարժ միութիւն օրգաններին։

Եւ այդ բոլորին անուանեցիր Դու նիւթ,
Եւ զետեղեցիր նրանց մէջ մի մասն Հոգուդ,
Կեանք տուիր շունչ հոգի տիեզերային,
Եւ անուանեցիր Դու մեզ էակ մարդկային։

Ո՞րքան ներդաշնակ կերպով կապեցիր,
Մեր մարմնի անդամները միմիանց կպցրիր,
Որ այդ մարմինը ստեղծեց բանականութիւն,
Խղճմտանք... որ անուանումենք հոգու կարողութիւն։

Այո՛, ես գիտեմ որ այս աշխարհիս նիւթը
Ապրեցնել է տալիս մեր թշուառ կեանքը,
Եւ այդ նիւթը մի միջոց է բանական մարդուն,
Ազնուացնելու՝ Քո ներշնչած հոգուն։

Հաւատում եմ Քեզ երկնային զօրութիւն,
Որ Դու իշխում ես տիեզերքիս անհուն,
Մարդկութիւնն ապերախտ իւր անզօր խելքով,
Ուրանում է Քեզ իւր բոլոր սրտով։

Իսկ հողին իւր մէջ խոր արմատ գցած՝
Բողոքում է լռիկ, անտես ձեւացած,
Խօսում է վիճում վառ զգայմունքով.
Չ'կայ վառ փաստեր հերքելու սիրով։

Ո՞վ Տէր, Դու որ ստեղծեցիր այս օրգանը,
Մարդիկ ի չար գործ դրին իրանց հեղ անձը,
Ստեղծեցիր տիեզերքս յարաշարժ ուժով,
Հաւասարութեան մէջ դրիր ամեն բան իւր կարգով։

Իսկ մարդս իւր անցողական աշխարհում
Ծառայում է նիւթին, և Քեզ մոռանում.
Մարմինն ու հոգին զոհում իւր շահին,
Որպէսզի ապրի հրճուանքի միջին։

Ծառայել նիւթին... և մարմինն ու հոգին
Նուիրել նիւթին, յարատեւ տալու իւր անձին,
Ապրել աշխարհի վերայ լոկ զգայմունքներով,
Ինձ համար զառն է, ով Աստուած, խորշում եմ հոգով։

Այս քաղաքաշխարհը, իւր բոլոր թափով
Որոգայթ է լարում իւր ամբողջ կազմով.
Կեանքը մի զալրոց է երկրի երեսին,
Ուր պէտք է կրթենք մեր անմահ հոգին։

Ո՞վ Տէր, մէկ նայիր մեր երկրի երեսին.
Տես ինչ է անում մարդկութիւնը հիւանդ թոյլերին.
Գոյութեան կռիւ են մղում մեր աշխարհում.
Քո ստեղծած մարդիկ՝ իրար յօշոտում։

Չէ, որ Դու ստեղծեցիր աշխարհս հաւասար,
Եւ զետեղեցիր սորա մէջ մարդիկ անհամար,
Որ ապրեն միասին օգնեն թոյլերին,
Չը լինի արհամարանք տգէտ խեղճերին։

Իսկ հիմա թոյլերը ծառայ են մեծերի ձեռին,
Թշուառ կեանքերը զոհել են տալիս իրանց շահերին,
Որ ապրեն ճոխութեան մէջ, հրճուին մարմնով,
Իսկ խեղճերը թող կորչին անկասար հոգով։

Ով տիեզերային ամենատէր զօրութիւն,
Քեզ է պատկանում ամեն իշխանութիւն.
Դառն է այս աշխարհն ամբողջ իւր կազմով,
Չ'կայ քաղցրութիւն ապրելու սիրով։

Այս դէպքում ձեզ եմ ես դիմում, խեղճեր ու թոյլեր,
Միացէք ամեն տեղ, ճնշուած անհատներ,
Թափեցէք նրանց վերայ ահարկու շանթեր,
Որոնք աշխատում են կլանել հոգիներ։

Ձը կարծէք երբէք, թէ վեհ զօրութիւնը,
Կը թափէ ձեր վերայ ամբողջ բարկութիւնը,
Հարուստն ու աղքատ մնուել են օդից,
Ծնուել են երկուսն էլ միևնոյն արգանդից։

Պէտք է ապրել հաւասար.
Այսպէս է աշխարհս յարաշար.
Գիտակից կերպով պէտք է աշխատել,
Եւ հաւասարութիւնը օրէնք դարձնել։

ԱՐԱԶԻՆ.

Արա՛զ, քեզ մատաղ, ինչո՞ւ ես տրտում,
Ինչո՞ւ դու այդպէս տխուր ես գնում,
Քեզ տխուր տեսնելիս սիրտս է կտրտում,
Ասա՛ դու շուտով ինչն է քեզ մաշում։

Մի՞թէ, քո սիրտը յուզում են վանքեր,
Քարուքանդ եղած հսկայ տաճարներ.
Մի՞թէ քո ափին նստած սոխակներ
Առաւօտից երեկոյ երգում են ցաւեր։

Արա՛զ, քեզ մատաղ, ո՞ւր են մեր քաջեր,
Անշուշտ տեսել ես մեր քա՛ջ հերոսներ.
Կռւում են արդեօք առիւծի ուժով,
Սրմանց գազաթին դիրքեր բռնելով։

Արա՛զս, փոխիր քո ճամբէն գնա արևմուտք,
Ուր չ՚կայ այն երկրում խիղճ ու զգայմունք.
Թափիր դու անվախ որոտ ու շանթեր,
Թող սարսի Եւրոպ քո ձայնից ահեղ։

Նայիր դէպի վեր, հսկայ Մասիսին,
Եւ ապա քո դիմաց՝ Ալագեազ սարին.
Նայիր դէպի աջ՝ Բարդոզ լեռներին,
Ձեռ-ձեռի տուած Հայկական պարին։

Ուխտել են սրանք քեզ հետ միասին
Նզովել անվերջ, մարդկութեան խղճին.
Չը թափէք արցունք, ապի դառնագին,
Չէք կարող օգնել ձայնով լալագին։

Յանկարծ Արագը ահեղ սարսափով
Մոնչաց ուժգին, հպարտ եռանդով։

Անփորձ պատանի, չ'գիտես դու փորձով,
Չ'կայ օգնութիւն, ճարդ տես շուտով։
Գիտցիր պատանի, դու այս օրուանից,
Մի յուսայ օգնութիւն անգութ օտարից։

Որոտաց Արագ՝ Մասիսը խնդաց,
Հայկական լերինք նայում սարսափած,
Սարերի կատարից թափւում դահավէժ
Ջրերն ուժգին... լուծելու վրէժ։

Մասիս, Արագած, Արայի, լեռներ
Տալիս էին ողջոյն, Դեղամայ սարեր,
Վրէժ են դուռում քարեր քարափներ,
Դողում են ձայնից հսկայ գագաթներ։

Յանկարծ Արագը մոնչաց ուժգին,
Ալիքները դիպչեց ժայռի կատարին.
Ճեղքեց կոհակներ կատաղի ուժով,
Կռուելու գնաց, դուռում դոչումով։

ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Հիւանդ եմ հոգով... վիրաւոր սրտով
Ընկած մահճի մէջ սպիտակ գգեստով.
Չ'կայ ոչ եղբայր և ոչ սիրասուն մայր,
Որ փարեն հոգիս սիրաս վշտահար։

Ամեն ինչ տխուր, ամեն բան լռիկ,
Երեկոյեան հովիկը սուլում էր մեղմիկ.
Լուսինն էր միան դալկացած դեմքով
Սփոփում էր հոգիս աղօտ իւր փայլով։

Ինչու՞ ես ծնայ այս սև աշխարհում,
Տանջուելու միայն մեծութեան խորքում.
Ծնուել յաւերով, տանջուել աշխարհում,
Հոգիս ու մարմինս խորովել կրակում։

Կրելու վշտեր, խոցեր անյատակ.
Ըմպելու անվերջ թունալից բաժակ,
Միթէ ժեռ մարդ ուզում ես ապրել,
Այս դառն աշխարհում հոգով տանջուել։

Ո՛չ երբէք... ես զուգեմ մեռնել,
Այս սառն հողի տակ մարմնով ես հանգչել,
Որպէսզի ազատեմ այս քար աշխարհից
Ցաւատանջ հոգիս. հսկայ ցաւերից։

Այն ժամ դագաղս համբ քայլերով
Կընթանայ ասաջ ի փոս նա սիրով,
Այդ փոսը կլլինի հանգիստ իմ կայան,
Մռայլ օթեան, թշուառ մարդկութեան։

ԱՐԻԻՆՈՑ ԵՐԿՐՈՒՄ.

Մռայլ է երկինքը. պատած սև քողով,
Ողջ բնութիւնը քնած խոր քնով.
Ընկած կիսամեռ խոցուած սրտերով,
Ողբում ենք լռիկ լալագին ձայնով։

Ով մռայլոտ խաւար դու գիշեր,
Ի՞նչ ես յօրինում լուռ ու անտարբեր.
Քո մռայլոտ ծոցում ծնում ես վշտեր
Խոցելու անվերջ մարդկութեան սրտեր։

Բայց ինչ է լսում սենեակի միջից,
Լսում են կանացի ձայներ երկունքից,
Պատճառ է դառնում մի անմեղ մանկան,
Գցել այս աշխարհ տանջել յաւիտեան։

Ով անգութ կին, ինչու դու ծնար
Այդ թշուառ մանկան այս ցաւոտ աշխարհ,
Քիչ կայ տանջուող մեր անգութ երկրում,
Ճնշուած մարդիկ դառն աշխարհում։

Ո՜վ Մայր. եթէ սիրում ես քո անմեղ մանկան,
Եղիր քարասիրտ մի բոպէ միայն.
Խրիր դու անվախ նորա սիրտը դաշոյն,
Տուր հանգստութիւն քո սիրուն որդուն։

Դժուար է քեզ համար... չէ որ մայր ես դու,
Ցաւատանջ մի մայր, մի թշուառ հոգու.
Թող դա էլ ապրի երկրի երեսին.
Թող կրի ցաւեր մեզ պէս դառնագին։

Թող տանջուենք հիմա... մի օր վառ դարուն,
Կ'ծագէ անշուշտ արևիկ սիրուն.
Կ'յիշենք անշուշտ մեր քաշած ցաւեր,
Կրգիմենք վստահ յառաջ անվեհեր։

Եւ մեր որդիներ հպարտ եռանդով,
Վրէժով լցուած ահեղ սարսափով.
Ձեռներին բռնած սուր ու սուսերով
Կը մղեն կռիւ անձուէր սիրով։

Այն ժամանակ մեր անդ ու անդաստան
Կ'լինին անշուշտ քաղցր բուրաստան.
Իսկ հարուստն ու աղքատ հաւասար կերպով,
Կապրեն երջանիկ ամենայն սիրով։

ՏԱՃԿԱՀԱՅ ԱԶՈՒՂԻ ԵՐԳԸ.

«Դարտս մեծ է, անցուորական,
Լսիր, քեզ էլ բաժին հանեմ.
Լսիր, ցաւիս արա դարման,
Անկարեկից ես ինչ անեմ։

Մեր դաշտ ու արտ դառան արին,
Ա՜խ, սուրբ վանքեր կողոպտուեցան.
Մեր տուն ու տեղ թալան արին,
Անտուն անտեր եղանք ցիր ցան։

Հայրենիքից զրկուած օտար.
Չենք իմանում, թէ ո՞ւր դիմենք.
Թողած մեր տուն մեր հայր ու մայր,
Անգութ բաղդի խորթ որդի ենք
Ա՜խ ո՞ւր դիմենք։

Դարտոտ մայրեր շատ լաց եղան,
Զատ ողբացին մեր քուերտինք,
Ա՜խ, մեր խոցերն են բազմազան,
Բայց վիրաբոյժ մենք մարդ չունինք։

Սև է պատել, սև մեր երկեր,
Սև է պատել և մեր սրտեր.
Էլ մարդ չունի մեր խեղճ երկիր,
Որ լաց լինի իր սև դարտեր։»

***

Հոտաւէտ ծաղիկ ծաղկել ես զուարթ,
Ծաղկոցի միջին կայտառ կապուտակ,
Բուրում ես քաղցր որպէս մանիշակ,
Թագուհի դարնան առաջին դու դարթ։

Չ'գիտես ծաղիկ, որ այս աշխարհում,
Մարդ չես գտնիլ, քեզ պէս սիրուն,
Որ քաղեն քեզի դնեն վրձքերուն,
Գեղեցկութիւն տալու մուայլ դեմքերուն։

Չես տեսնիլ, որ սարեր ու ձորեր,
Արիւն են դառել ողջ երկիրներ,
Սոխակները եկան լալով գնացին,
Տեսան իրանց բուն քանդած վերատին։

Մի՛ ծաղկիլ խնդրեմ, թոռոմիր շուտով,
Մարդ չես գտնիլ դու քաղելու սիրով,
Ողջ հայու սրտեր պատած են վշտով,
Անդ ու անդաստան ցողուած արիւնով։

***

Զմրան սև դաժան շղթայք սաստկացան,
Ցնքում է հեռում, երկիրն համայն,
Լալով ողբալով, անցնում են օրեր,
Վիշտն է սաստկանում ու վառում սրտեր։

Բաւ է ժեռ աշխարհ. որքան տանջեցիր,
Մեր թշուառ երկրում, հալ ու մաշ արիր,
Մեղք ենք հերիք է խնդրում ենք ներիր,
Ի սէր Աստուծոյ, խղճա, մէկ նայիր։

Չ՚նայեց անգամ... իսկ դուք սև սրտեր,
Ինչու՞ չէք թափում, որոտ ու շանթեր,
Նստած շղթայած ողբ էք յօրինում,
Ձեր որդիների մահուան սպասում։

Չէք տեսնում ձեր դիմաց վառահեղ դարնան,
Զուարթ սարերու բուրմունք բերկրութեան,
Չէք յիշում սոխակաց երգերն քաղցրիկ,
Որ կ՚երգէին քաղցր անուշիկ։

Այո՛, դուք սիրում էք նիրհել ու լռել.
Դաժան թշնամու առջևն խոնարհուել,
Որ ստրուկ դարձնեն տանջեն անարգեն
Ու ձեր սրբութիւններն ոտնատակ անեն։

Հերիք է սիրելիք, ելէք կանգնեցէք,
Դարուն է արդէն գործի վազեցէք,
Մայիսն արդէն եկել է մեր դռան,
Ծաղիկներ է բերել անուշիկ գարնան։

***

Առաւոտ էր. արևը ծագելուն պէս,
Թռչուն ու ծիծառ դուրս եկան հանդէս,
Դէպի զովաշունչ օդային եթեր,
Թռչում ու անցնում հեռաւոր վայրեր։

Ահա անուշիկ երգող սոխակներ,
Ձէն-ձենի տուած, կազմում են խմբեր,
Մնաք բարով զուք սիրունիկ վարդեր.
Էլ չենք գայ ձեզ մօտ խոցուած են սրտեր։

Կար ժամանակ, որ քաղցը բուրմունքով,
Կեանք էիք տալիս բուրում եռանդով,
Իսկ հիմա անհոտ անսիրտ քարացած,
Սպասում էք խոցելու սրտերն այրած։

Ի՞նչ սրտով հիմա ապրենք այս երկրում,
Քանի որ մարդկութիւնը ոչ է յօրինում,
Ձանթելու եղբօր ահ ու սարսափով,
Տգէտ ամբոխի գոռում գոչումով։

Անիծուած «եսականութիւն»
Դու որ զոյութիւն ունիս մարդկային սրտում,
Դողում են քո առաջ ապառաժ սարեր,
Բո ձայնից սարսում զորեղ դաղաններ։

Արդարութիւն են փնտրում,
Խորհիր լրջութեամբ քո մռայլոտ սրտում,
Այն ժամ կիմանաս թէ ով է իշխում
Ամբողջ աշխարհիս տիրոջ լռութիւն։

«Խոյեմութիւն և կրթութիւն»
«Ազնուութիւն և ապա ազգասիրութիւն»
Ով իմ թշուառ հայ ժողովուրդ,
Այն ժամ կ'տանես դու միայն յաղթութիւն։

Իսկ հիմա դու մռայլոտ դեմքով,
Ուզում ես իշխել, քո կոպիտ ուժով,
Ամբողջ մարդկութեան խելքն քաջարի,
Ուզում ես յաղեցնել «ԵՍԴ» կատաղի։

Ո՛չ և ամեն ժամանակ կասեմ ոչ,
Ամբողջ աշխարհին դու արա կոչ,
Հարցրու նրանց թէ ո՞ւն է բարին
Այն ժամ կ'փոշմանես քո բռնած դիրքին։

Գիտցիր նա դարձեալ քեզ կասէ այն,
Ինչ որ ես քեզ ասացի միայն,
«Խոհեմութիւն և կրթութիւն»,
«Աղնութիւն և ապա ազգասիրութիւն»։

Գիտցիր այդ է քո միայն յաղթութիւն։

1906 թ. Ապրիլի 21.
ԱԽԱՂՑԽԱ.

ՆՈՒԷՐ ՀԱՅ ԱԶՈՒՂԻՆ.

Սազդ վեր առ, ինձ ձայնակցիր,
Մէկ էլ յուսոյ երգ երգենք,
Վհատութիւն մի կողմ դցիր,
Միշտ ողբալու լալու չենք։

Ե՞րբ ես տեսել գարուն գալիս
Չը կանաչի վարդենին.
Կամ սոխակին յաւէտ լալիս
Երբ ծաղկում է սիրելին։

Տեսել ես այդ, ոչ տեսել չես,
Արդ էր ես դու արտասուում.
Մենք էլ կը լինինք միշտ այդպէս,
Մեզ էլ գարունն է սպասում։

Այն ժամանակ մեր հայրենիք
Կը լինի մեզ բացուած վարդ.
Ու մենք սորան սոխակ կը լինենք,
Մի վհատուիր դու հայ մարդ։

Քո էլ, իմ էլ դարար մեծ է.
Սազդ վեր առ, երգ երգենք.
Դեհ, շուտ լարիր սազիդ լարն,
Ցաւի, մահի երգ երգենք։

Սազդ վեր առ, ինձ ձայնակցիր,
Մէկ էլ յուսոյ երգ երգենք.
Վհատութիւն մի կողմ գցիր,
Միշտ ողբալու լալու չենք։

ՓՈԹՈՐԻԿ.

Սևացաւ երկինք... պատեց թուխպերով,
Գորշագոյն ամպերն իրար դիպչելով,
Եկան պատեցին զոռոզ ջրերին,
Կրակ թափելու՝ Սևանայ գլխին։

Սկսեց փոթորիկ, և մեր խեղճ նաւակ,
Ուխտեց գլորուել, ջրում անյատակ,
Ուզում էր իսկոյն վերջ տալ մեր կեանքին,
Բայց մարդկային յոյսը յաղդեց բոլորին։

Նաւ իմ սիրական ապրել ենք ուզում,
Չենք ուզում մեռնել այսպիսի կուռում,
Ճտապիր ճեղքելու զոռոզ ալիքներ,
Դէպ նաւահանգիստ յաղդութեամբ հասնել։

Այո, իմ նաւակ, դժուար է քեզ համար,
Ճեղքելու զոռոզ ալիք ընդհամար,
Լսում ես անշուշտ մեր յուժկու ձայներ
Ճտապիր փրկելու մեր թշուառ կեանքեր։

Նաւ իմ սիրական, ես ունիմ մայր
Սիրասուն եղբայր, հէգ թշուառ հայր
Նստած Սևանայ ափին վրդովուած
Սպասում են, լալիս, սրտով դալկացած։

Չենք ուզում մեռնել, անյետ ջրերում,
Ուզում ենք մեռնել հայրենի երկրում։

Սթափուեց նաւակ... նայեց մեր դեմքին.
Ուխտեց ազատել, մեր թշուառ հոգին.
Յանկարծ մեր նաւակ վերջին ուժերով,
Մղուեց դէպի ափ, ազատ ապահով։

* * *

Անյատակ հոգիս, խորունկ, անհուն, անսահման,
Բիւր մոլորակ աշխարհներ լոիկ մնջիկ ման կուգան,
Խորհուրդներս կարծես թէ՝ կատաղի ովկիանի նման,
Մռնչում են զարկւում, յոյսերս պատանեկութեան։

Բայց այնտեղ, անթիւ ցոլքեր կան պլպլացող
յոյսերու
Յոյսեր, որ միմիայն խաբուսիկ տենչ են այս աշ-
խարհում
Ու խեղճ միտքս այս անել քաոսին մէջ մոլորուն
Ման է դալիս, թափառում, տիեզերքիս մէջ անհուն։

Երկար սաւառնեց նա մթութեան խորքում,
Վշտեր ու ցաւեր ամփոփեց սրտում,
Վշտից ծնուեցան յոյսեր պատուական,
Այսպէս ուխտեցի ապրել յաւիտեան։

Անցան ամիսներ տարիք տխրալի,
Միրտս պատած էր տխրութեան քողով,
Հոգիս ահեղամռունչ կանգնած կենդանի
Նզովք էր կարդում ի դիմաց աշխարհի։

Բայց ո՞վ է կանգնած լռիկ իմ դիմաց,
Ու դիտում շեշտակի ուշքս գրաւած,
Հոգիս այլայլեց, յոյսերս խորտակեց,
Մտաւ հոգոյս մէջ ու սիրտս շանթեց։

Զօրութիւն տուր մտքիս երկնային էակ,
Դիտելու սրտիս իշխող զօրութեան,
Կեանք տուր հոգոյս սիրելու նրան,
Վեհ իդէալների յաղթող զօրութեան։

Նայեցի սրտիս և ինչ եմ տեսնում,
Անարատ «ՍԷՐՆ» է միակ իմ սրտում...։

ԵՐԱԶ.

Ահա իմ հոգին վերև բարձրանում
Դէպի հրավառ լուսատու եթեր,
Քաղցր բերկրութեամբ գրկում են աստղեր,
Փարում են հոգիս, անուշիկ հովեր։

Ահա իմ դիմաց կանգնած է արև,
Միւս կողմը լուսին տալիս են բարև,
Բարով դու եկար տանջուած էակ,
Մեզ մօտ կ'գտնես յաւիտեան փրկանք։

Ահա ականջիս դիպչում են ձայներ,
Ձայներ մտախոհ հոգևոր երգեր,
Ահա իմ առաջ բացւում է եթեր,
Գալիս անցնում են ան՞ահ հոգիներ։

Բայց ինչ է ացւում հիմա իմ դիմաց,
Խորասոյզ հոգիս դիտում է ափշած,
Գալիս են դէպի ինձ հրեշէն ուժով,
Ահեղ զօրութիւնը, յաղդական խմբով։

Ո՞րքան կախարդիչ հոգեզմայլ պատկեր,
Եւ որպիսի սիրուն, հրաշալի եթեր,
Ոչ մի արարած տեսած երբէք չէր,
Այսպիսի շքեղ վառվռուն զարդեր։

Յանկարծ հոգիներ տարան դէպի վեր,
Ուր չ'կար այնտեղ դարտեր ու վշտեր,
Կը մնաս այստեղ մեզ մօտ՝ դու սիրով,
Ու կապրես մեզ հետ ազատ ապահով։

Ո՞րքան ուրախ էր, ազատ իմ հոգին,
Թռչում էր անցնում նայում աշխարհին,
Որքան անուշիկ անմահ հոգիներ,
Տալիս էին համբոյր սիրուն հրեշտակներ։

Յանկարծ իմ հոգին, ամպերի միջից,
Նայեց դէպի ցած երկրի երեսին,
Տեսաւ իմ եարին նստած սև քարին,
Փնտրում, չի գտնում կարօտած եարին։

Յանկարծ իմ հոգին գոռաց խիստ ուժգին,
Մնա՞ք բարով դուք աստղը ու լուսին,
Էլ չեմ դայ ձեզ մօտ, դնայ իմ եարին,
Թող տանջանք կրեմ, ա՞ կրծքի տակին։

Թողէք, թող տուէք, սլանամ ուժգին,
Դէպի նա խոյանամ հասնեմ իմ եարին,
Տանջանքն ու սէրը եղբայր են միասին,
Ես ապրել չեմ կարող հրճուանքի միջին։

Ասացի ու սլացայ,
Դէպի նա դարձայ,
Իսկոյն մօտեցայ,
Խնդալ սկսայ։
Սիրել ուզեցի,
Գրգռել ուզեցի,
Աչքերս բացի
Ոչինչ չ'տեսի։

***

Մութ գիշերին ուր չկար աստղեր ու լուսին,
Ես միալար կանգնած սև մթութեան միջին.
Մեղմ հովիկը փարում, փչում իմ երեսին,
Դարձեալ շանթալից մռայլոտ սիրտս է տրտմագին։

Ո՜հ, սիրտ իմ տխրալի, մի յիշիր նրան...
Թող հանգիստ ննջէ, տուր մոռացութեան,
Մոռացիր աչերն, նրա տեսքն գեղեցիկ,
Կամարեայ ունքերն ու ժպիտն քաղցրիկ։

Այո՛, կայ մէկը, որ սրտիս խորքերում,
Անդրադարձել է իւր պատկերն սիրուն,
Որ միշտ պարտէզում ուր որ լինէի,
Պիտ պատկերանար իւր տեսքն սիրելի։

Երդեօք սէր է, թէ խաբուսիկ յոյսեր,
Որ գալիս է դիմաց ու թռչում եթեր,
Ժպտում է զուարթ, նայում շեշտակի,
Յաղորդել է ցանկանում սէրն տենչալի։

Ո՛չ, կրակոտ սիրտ իմ մի յուզուիր,
Նայիր երկնքին, մռայլոտ ամպերին,
Որի ծայրերից դուրս է գալիս լուսին,
Ողջոյն է տալիս քո մռայլոտ դեմքին։

Իսկ դու մռայլ հոգի, նստիր էս քարին
Ու մեղմիկ օրօր ասա, քո կարօտած խարին,
Թող ձայնակցեն քեզ հետ հովերն մեղմիկ,
Եւ քաղց անուշիկ թռչնոց դայլայլիկ։

Այն ժամ, գիտցիր, որ սիրասուն հարդ,
Կը փարէ սիրով քո սիրուն լանջդ,
Եւ այն օրուանից նրա սրտի մէջ,
Կրակ կը վառուի, կ'տոչորուի անվերջ։

***

Այս ինչ տխրութիւն պատել է սրտիս,
Մեռած է երևում կեանքս ու հոգիս,
Անցնում են օրեր ժամեր ողբալի,
Դարձեալ մտախոհ, դարձեալ տխրալի։

Հնարիք է սիրտ իմ ողբան տանջուար,
Դառն հոգսերից հալ ու մաշ եղար,
Բաւ է սիրելիս ողբան մաշուեցար,
Ծանր խոցերի տակին ընկճուար։

Այո՛ ես գիտեմ քեզ ով է կապել,
Ծանր շղթայով, հպարտ զենքերով,
Այդ սէրն է հոգիս յաղթող զօրաւոր,
Որ մտել է քո մէջ ահաւոր ուժով։

***

Հովերն ինձի արցունք տուին սրտագին
Ձորերն անթիւ խոցեր դրին իմ սրտին,
Նստած քարին լաց եմ լինում տրտմագին,
Չ'կայ ըսող ձայնդ կարէ լալագին։

Եարա՛ սարեր. անո՛ւշ հովեր,
Դարման արէք, մեռնիմ ձեզի,
Ժեռո՛տ սարեր, խոր խոր ձորեր,
Մահլամ արէք, մեռնիմ ձեզի։

Եարա՛ սարեր, ասէք եարիս,
Նստած եարդ, իմ կատարիս,
Լաց է լինում քեզի յիշում,
Քեզի համար կեանքը մաշում։

ՅՈՒՍԱՀԱՏ ԶԱՅՆԵՐ.

Մութ գիշերին. մռայլ գահլիճի միջից,
Լսւում է խիստ սահուն նուագի ձայներ,
Նրա թոյլ հիւանդոտ մատների տակից,
Լսւում է լռիկ, սիրոյ բողոքներ։

Ո՜հ, չքնաղ կոյս, քո զգայուն ձայներ,
Յուզում են սիրտս, հոգիս խղէալներ,
Դիպչում են ականջիս սիրոյ յառաջներ,
Նուագիր անվերջ, անլուր ակորտներ։

Կրակիր սիրտդ, գարկ ժանգոտ լարերին,
Թող լաց լինեմ անվերջ, սև մթութեան միջին,
Նուագիր ինձ համար տանջուած սրտիս,
Քանի յուզուած է թշուառ իմ հոգիս։

Տեսնում եմ ահա սպիտակ զգեստով,
Նստած ես լռիկ, ոսկորուած սրտով,
Նուագում ես, ա[illegible]վերջ նուիրուած հոգով,
Սփոփում ես սի[illegible] սիրոյ կարօտով։

Նուագիր քեզ համար, սփոփիր ձայներով,
Տոչորուած սիրտդ լռիկ մաշելով,
Իսկ ես անսէր, անսիրտ կարօտով,
Թող տանջուեմ անվերջ խաբուսիկ յուսով։

Ո՜հ, կոյս նազելի, սիրիր դու անվերջ,
Քանի որ վառվում է սիրոյ կայծը քո մէջ,
Իսկ ես զրկուած սիրուց յաւէրժական,
Ծաղիկ հասակում կը մտնեմ գերեզման։

ՑԱՆԿ.

Երես.

1) Իմ աղօթքը 5
2) Արազին 9
3) Պանդխտութեան մէջ 12
4) Արիւնոտ երկրում 14
5) Տաճկահայ աշուղի երգը . . . 16
6) Հոտաւէտ ծաղիկ 17
7) Զմրան սև դաժան շղթայք սատակացան. 18
8) Առաւօտ էր 20
9) Նուէր Հայ աշուղին 23
10) Փոթորիկ 25
11) Անյատակ հոգիս 27
12) Երազ 29
13) Մութ գիշերին 32
14) Այս ինչ տխրութիւն 34
15) Հովերն ինձի արցունք տուին սրտագին. 35
16) Յուսահատ ձայներ 36

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) ԼԱՅՈՂ ԱԶՈՒՂԸ
Տաճկահայերի կեանքից մի ուրուագիծ 15 կ.

2) ԱՐԵԱՆ ՎԲԷԺ . . . . . 5 „

3) ՀՈՎԻԿ (Արձակ բանաստեղծութիւններ) 8 „

Շուտով լոյս կ'տեսնի «ՀՈՎԻԿ»ի II պրակը։

Դրժել՝ Ахалцыхъ
Սերկս Քայֆաճյանցս.

ՀՀ Ազգային գրադարան
NL0326948

24916